Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 09

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<06>> հուլիսի 2026թ. ք. Երևան

2026 թվականի հուլիսի 6-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Մ. Հովհաննիսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի ավագ իրավաբան, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ Պ. Գալստյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:
2. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:
3. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

Քննարկվեց՝ «ԱՎՏՈԳԱՐԴ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2026 թվականի հունիսի 8-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 2026 թվականի հունիսի 10-ին և 19-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2026 թվականի հունիսի 8-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Ք. Երևան, Արշակունյաց պողոտա 129/13 գործունեության վայրում: 2026 թվականի հունիսի 10-ին և 19-ին կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ տեխնիկական զննության կայանի տարածքների օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և հատակագիծը և տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների ստուգաչափումների դրական եզրակացությունները և տեխնիկական բնութագրերը պարունակող անձնագրերը: Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրություն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Պ. Գալստյանը և Տ. Գասպարյանը:

Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերին կից N 22052026-01-0148 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի հետ ներկայացված հատակագծի և հանձնաժողովի անդամների կողմից ՀՀ, Ք. Երևան, Արշակունյաց պողոտա 129/13 գործունեության վայրի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ «ԱՎՏՈԳԱՐԴ» ՍՊ ընկերության ներկայացրած արտադրական բազան չի համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 345-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ տեխնիկական զննության ընթացքում տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքներին ներկայացվող պահանջներին /այսուհետ՝ Պահանջներ/:

Ըստ Պահանջների 10-րդ կետի՝ որպես տեխնոլոգիական երթուղի պետք է օգտագործվի տրանսպորտային միջոցների ուղղագիծ տեղաշարժը՝ ըստ աշխատատեղերի, իսկ 13-րդ կետի համաձայն՝ տեխնիկական զննության տեխնոլոգիայով նախատեսված տեխնիկական արատորոշման միջոցների բաշխումն ըստ աշխատատեղերի (գծերի), ինչպես նաև տրանսպորտային միջոցների տեղաշարժման տեխնոլոգիական երթուղին պետք է ապահովեն տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքների աշխատատարության հավասարաչափ բաշխումն ըստ աշխատատեղերի: Պահանջների 15-րդ կետի համաձայն՝ անցուղային աշխատատեղերը պետք է տեղաբաշխել արտադրական շենքի մուտքի և ելքի հետ մի գծի վրա:

«ԱՎՏՈԳԱՐԴ» ՍՊ ընկերության ներկայացրած արտադրական բազայի երկարությունը 18 մետր է, որը համապատասխանում է թեթև տրանսպորտային միջոցների հասքագծի համար սահմանված նվազագույն երկարությանը, սակայն չի ապահովում աշխատատեղերի տեղաբաշխումը արտադրական շենքի մուտքի և ելքի հետ մի գծի վրա: Տրանսպորտային միջոցը արտադրական բազայից դուրս գալու համար 18 մետրի սահմանում պետք է շրջադարձ կատարի դեպ ելք: Տեխնոլոգիական նման երթուղին չի ապահովում աշխատանքների աշխատատարության հավասարաչափ բաշխումն ըստ աշխատատեղերի օրենքով սահմանված 18 մետր երկարությամբ, քանի որ ուղղագիծ ելքը սահմանափակված է և մեքենայի շրջադարձի շառավիղը ներառում է 18 մետր երկարության վերջին հատվածը՝ բացառելով այդ հատվածում աշխատատեղ տեղադրելու հնարավորությունը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՎՏՈԳԱՐԴ» ՍՊԸ	0 կողմ, 5 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 345-Ն որոշման 1-ին կետով հաստատված պահանջների 10-րդ կետի 2-րդ պարբերության, 13-րդ և 15-րդ կետերով սահմանված պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Ֆիզիկական անձ՝ ՍԱՄՎԵԼ ՀԵՆՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ 01.07.2026թ. ներկայացված դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց ֆիզիկական անձ՝ ՍԱՄՎԵԼ ՀԵՆՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ 01.07.2026թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթերը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՍԱՄՎԵԼ ՀԵՆՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ՀԵՂԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ 03.07.2026թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05434 լիցենզիան և թվով 10 լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Անհատ ձեռնարկատեր ՀԵՂԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ 03.07.2026թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05434 լիցենզիան և թվով 10 լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումները և դիմումներին կից փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրների կորստյան մասին հայտարարությունները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՀԵՂԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան